

# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՄԻՈՒԹԵԱՆ

ՄՇԱԿՈՒԱԾ ԵՒ ՎԱԻԵՐԱՑՈՒԱԾ  
Ա. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԷ

1990 — ՊԷՅՐՈՒԹ

37 (49.925)

4-15

h

2400

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՄՇԱԿՈՒԱԾ ԵՒ ՎԱԻԵՐԱՑՈՒԱԾ  
Ա. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԷ  
(1990)

6251

1990 — ՊԵՅՐՈՒԹ

# ՆԱԽԱԲԱՆ

«Համագգային»ը հիմնում է Գահիրեի մէջ, 28 Մայիս 1928ին՝ «Հայ կրթական եւ Հրատարակչական Բնկերութիւն» անունով: Ապա, մասնահիւղեր ստեղծուած են եգիպտոսի, Սուրիայ եւ Լիբանանի մէջ. սկզբնապէս Կեդրոնական վարչուիքներ հաստատուած է Գահիրէ:

1930ին Պէյրութի մէջ բացուած է Հայ ձեմարանը՝ զլլատարաբար Լեւոն Շանթի եւ Կիկոյ Արապեանի ֆանէերով: Հոն փոխադրուած է նաեւ «Համագգային»ի կեդրոնը: Հետագային ան ճանչցուած է լիբանանեան կառավարութեան կողմէ «Համագգային» Հայ կրթական եւ Մշակութային Բնկերակցութիւն» անունով:

Ժամանակի ընթացքին «Համագգային»ի գործունէութիւնը ծաւալած եւ դարձած է համասփիւռֆեան: Ան մասնահիւղեր ունեցած է Միջին Արեւելի այլ երկիրներու, հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներու, Եւրոպայի եւ Աւստրալիոյ մէջ:

Կերկայ կանոնագիրը, մշակուած Արեւմի մէջ 1990ի Օգոստոսին գումարուած Ա. պատգամաւորական ժողովին կողմէ, կը ներկայացնէ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿԻՐԹԱՎԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ կազմակերպական այժմու կառոյցը:

1990ը Հայաստանի եւ Արտերկրի հայութեան համար կը հանդիսանայ պատմական կարեւոր իրադարձութիւններու տարին եւ «Համագգային»ը կը ղեկ համահայկական կազմակերպութիւն մը դասնալու կարելիութեան սեմին՝ Հայաստանի մէջ եւս գործունէութեան հետանկարներով:

«Համագգային»ը կը հաւատայ մարդկային, ազգային եւ մշակութային արժէքներու կարեւորութեան ու կը ձգտի անոնց տարածումին եւ խորացումին:

Իրրեւ Հ.Յ.Դանակցութեան զազափարականին դրօշակիր եւ անոր հովանաւորութիւնը վայելող միութիւն, հաւատալով քաղաքական եւ մշակութային ազգակներու փոխազդեցութեան՝ «Համագգային»ը իր անմիջական մասնակցութիւնը կը բերէ Հայ Դատի հետապնդումի աշխատութիւններուն: Ան կը հաւատայ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի իտէլային ու կը ձգտի անոր, համոզուած որ սեփական ու իմբիշխան հայրենիքի մէջ միայն հայ մշակոյթը կրնայ հասնիլ իր ամբողջական ծաղկումին:

## Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿԻՐԹԱՎԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՒՆ

### ԱՆՈՒՆ

Յօդուած 1— *Միութեւնը կը կոչուի Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն (ՀՀԿՄՄ):*

### ՆՊԱՏԱԿ

Յօդուած 2— *Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան նպատակն է՝*

- ա— Ստատրել Հայ մշակոյթին, Հայ դպրութեան, Հայ լեզուի եւ ընդհանրապէս Հայ հոգեկան եւ իմացական արժէքներու ճանաչման, զարգացման, տարածման եւ ժողովրդականացման՝ Հայաստանի եւ Արտերկրի մէջ:*
- բ— Օժանդակել Հայաստանի հարստացման հեղեղուն, ազգային նշանակութիւն ունեցող ասանդութիւններու շարունակման եւ մշակութային նոր ասանդներու ստեղծման:*
- գ— Մշակութային ձեռնարկներով՝ ցուցահանդէս, հանդիսութիւն, հրատարակութիւններ, հայր, հայութիւնն ու Հայ Դատը ծածոթացնել Հայ թէ օտար հասարակութեան:*

### ՄԻՋՈՅՆԵՐ

Յօդուած 3— *Միութեւնը իր նպատակները կ'իրագործէ հետեւեալ միջոցներով.*

- ա— Կը հաստատուէ կը վարէ զպրօցներ, ձեմարաններ,*

ուսու մնասիրական հիմնարկներ և հաստատություններ.

բ— Կը հրատարակել գրական, գեղարուեստական, պատմական, տեղագրական, դպրոցական, մանկական և այլ զերբեր, գրական ու գիտական հանդեսներ, թերթեր, գեղարուեստական նկարներ, աշխարհագրական քարտեզներ, լսողականության նրթեր և ամէն ինչ որ կը ստատարէ մշակոյթի պահպանման և զարգացման, ինչպէս նաև կրթական մատակարարի բարձրացման.

գ— Կը հաստատու և կը վարէ մատենադարան և թանգարան: Կը կազմակերպէլ ցուցահանդեսներ, փաստասոյններ, գեղարուեստական ձեռնարկներ, դասախօսութիւններ, սեմինարներ՝ մշակութային գանապան բնագրասոյններու համար.

դ— Կը քաջակերէլ մշակութային-գեղարուեստական ձիրքեր ցուցարկող պատանիներն ու երիտասարդները և յատուկ կրթութեան կը յատկացնէլ այն ու սանտղներու, որոնք կ'ուզեն մասնագիտանալ հայ գրականութեան և արուեստի բնագրասոյններու, ինչպէս նաև ուսուցչական և հանրային-հրատարակային տարարկող որդեկրոջներու:

ե— Կը քաջակերէլ նկրտականներն ու արուեստագետները, հրատարակելով և տարածելով սանտղ գործեր, կազմակերպելով սանտղ այցելութիւններ շրջանէլ շրջան, շաբաթներէլ Թրտերի և նահասար.

զ— Հայութիւնն ու Հայ Դատը գանապան մնասիրակերպ լսողականութիւն տեղադրութիւն և հրատարակութիւններ կ'ուզէլ կը նախաձեռնէլ այլ թէլ տարւոտարակութեան.

է— Կը կատարէլ գեղարուեստի մշակոյթի գանապան բնագրասոյններու մասնագրասոյն մարզութի կարիքներն և կ'ուսուցանէլ մասնագրասոյն մարզութի կատարութեան.

զ— Կը նկատու սեփական կայտաններ և կը կատարէլ շինութիւններ, բլլան անոնք իր գործու նուրթեան թէլ հասոյթ տարուստիւն տարատակով, միութեան ծրարիւնները իրագրանէլու տարարակութեամբ.

թ— Կը գործակցէլ մշակութային այլ կազմակերպութիւններու հետ Հայրենիքի թէլ Արտերկրի մէջ.

Ճ— Կը կազմակերպէլ ձայնաստիւտի և հեռատեսիլի յայտարարներ:

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդուամ 4— «Համագրային» կրնան անդամակցել 18 տարեկանէլ վեր ըլլող այն անհասաները, որոնք կ'ուրացնեն անոր նպատակն ու առաջարկանքները, պատրաստ են ծառայելու անոնց իրականացման, յանձն կ'առնեն մասնակցութիւն ըրելէլ «Համագրային» շախտատանքներուն և ժողովներուն և յարգել իրենց նրթական պարտասորութիւնները և կանոնակրիրը:

Յօդուամ 5— Անդամակցութեան գիմունագրիրը, երաշխար երկու անդամներու ստորագրութեամբ, կը յղուի մասնածիղի վարչութեան, որուն վարերացուսով ենթական կը գառնայ «Համագրային» անդամ:

Յօդուամ 6— Իր բնակավայրը փոխած անդամը կրնայ փոխանցուիլ իր նոր բնակավայրի մասնածիղի: Անդամի մը մասնածիղէլ մը այլ մասնածիղ փոխանցուսմը կը կատարուի շրջանային վարչութեան միջոցով, իսկ շրջանէլ շրջան՝ կեղրոնական Վարչութեան միջոցով և համարատաստխան փոխանցարկրով:

Յօդուամ 7— Համագրայնական մը կրնայ մաս կազմէլ մշակութային այլ միութեան մը, միայն շրջանային վարչութեան արտանուրթեամբ:

Յօդուամ 8— Մշակոյթի, գիտութեան և դպրութեան մէջ կարելուր վաստակ ունեցող հայ թէլ ոչ-հայ անհասաներ շրջանային վարչութիւններ կամ կեղրոնական Վարչութեան նախածեռնութեամբ կը գառնան «Համագրային» պատուսյ անդամ:

ԿԱՌՈՅՑ

- Յօդուած 9.— «Համազգային»ը ու նի հետեւեալ ժողովներն ու վարչութիւնները:
  - ա.— Մասնաճիւղի ընդհանուր ժողով, որմէ կը բխի մասնաճիւղի վարչութիւն:
  - բ.— Շրջանային ժողով, որմէ կը բխի շրջանային վարչութիւն:
  - գ.— Պատգամաւորական ժողով, որմէ կը բխի կեդրոնական վարչութիւն:

ՄԱՍՆԱՃՆԻՎ

- Յօդուած 10.— Մասնաճիւղերը կը գործեն աշխարհադրական սուեայ շրջանի մը մէջ եւ կ'ունենան բազմաճիւղ գործունէութիւն:
- Յօդուած 11.— Մասնաճիւղի կազմութեան նախաձեռնող կրնայ ըլլալ շրջանային վարչութիւնը: Այս նախաձեռնութիւնը կրնայ զայ նաեւ շրջանի մը մէջ հայ մշակութիւնի հետաքրքրուող անհատներէ, որոնք կ'իրացնեն «Համազգային»ի կանոնադիրի տրամադրութիւնները եւ մասնաճիւղ մը կազմելու համար հաւաքական դիմում մ'ը կատարեն շրջանային վարչութեան:

Յօդուած 12.— Մասնաճիւղի մը կազմութեան համար անհրաժեշտ թիւը կը ճշդուի շրջանային ժողովին կողմէ եւ տեղ կը դանկ շրջանի կանոնադիրին մէջ:

Յօդուած 13.— Մասնաճիւղ մը լուծուած կը համարուի, եթէ իր անդամներուն թիւը պակաս է ճշդուած նուազագոյն թիւին:

Յօդուած 14.— Մասնաճիւղի մը լուծման պարագային անոր գոյրերն ու պատրաստ դումարները կը փոխանցուին շրջանային վարչութեան:

ՄԱՍՆԱՃՆԻՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդուած 15.— Ընդհանուր ժողովը մասնաճիւղի մը գերագոյն ժողովն է:

Յօդուած 16.— Ընդհանուր ժողով կը գումարուի անուսպն տարին անգամ մը:

- Յօդուած 17.— Մասնաճիւղի ընդհանուր ժողովը՝
  - ա.— Կ'ընտրել իր զիւանդ եւ հաշուեքներէ, արխիւային, բանաձեւի եւ քուէտխոյզ յանձնախումբերը, որոնց իրաւասութիւնները կ'աւարտին ժողովի վաւկու մին:
  - բ.— Կը բննէ շրջանաւորութեան վարչութեան գործունէութիւնը, նիւթական հաշուեկէրու եւ հաշուեքներէ ու արխիւային յանձնախումբերու գեղկու ցաղրերը:
  - գ.— Կ'ընտրել շրջանային ժողովին իր ներկայացուցիչները, կանոնադիրի սահմանած թիւով:
  - դ.— Կը լսէ շրջանային եւ Պատգամաւորական ժողովներու մասին գեղկու ցում:
  - ե.— Կուսայ որոշումներ կ'ընէ առաջարկներ մասնաճիւղի գործունէութեան շուրջ:
  - զ.— Կը ներկայացնէ իր առաջարկները շրջանային ժողովին:
  - է.— Կը ճշդէ անդամաւճարի սակը:
  - ը.— Կ'ընտրել նոր վարչութիւն:

625

- Յօդուած 18.— Մասնաճիւղի արտահերթ ընդհանուր ժողով կը գումարուի—
  - ա.— Վարչութեան հրուերով:
  - բ.— Անդամներու մեծամասնութեան պահանջով:
  - գ.— Արտակարգ պայմաններու մէջ, շրջանային վարչութեան հրուերով:

Յօդուած 19.— Չեղուցական ընդհանուր ժողով կը գումարուի անգեղանայու համար վարչութեան գործունէութեան ծրարիրին:

Յօդուած 20.— Մասնաճիւղի բնդհանուր ժողովը օրինաւոր կը համարուի, եթէ ներկաները (անդամներու բնդհանուր թիւէն զերեւոյժ բանաւոր բացակաները) կազմեն անդամներու թիւին պարզ մեծամասնութիւնը:

Յօդուած 21.— Առաջին հրաւերին մեծամասնութիւն չզուտանալու պարագային, երկրորդ ժողովը կը գումարուի ըստ շրջանի ներքին կանոնադրի տրամադրութիւններուն:

Յօդուած 22.— Մասնաճիւղ մը կրնայ որեւէ ատեն բնդհանուր ժողով գումարել, անդեակ պահել ետք շրջանային վարչութիւնը: Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամները անդեակ պահել բնդհանուր ժողովի գումարումէն, ժողովէն նուազագոյնը երկու շաբաթ առաջ: Ընդհանուր ժողովին, ուր վարչութիւնը համարատու է, վարչութիւնը կը մասնակցի մէկ իրաւասու ձայնով (որչուած՝ վարչութեան կողմէ), իսկ մնացեալ անդամները՝ խորհրդակցական ձայնով:

Յօդուած 23.— Ընդհանուր ժողովին որչափ մեծերը կը արուին և՛ ընտրութիւնները կը կատարուին ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդուած 24.— Մասնաճիւղի մը բնդհանուր ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին բոլոր անդամները և՛ շրջանային վարչութեան ներկայացուցչը, իսկ խորհրդակցական ձայնով՝ շրջանային վարչութեան անդամները, որոնք անդամ չեն տուեալ մասնաճիւղին:

### ՄԱՍՆԱՃԻՒԳԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդուած 25.— Վարչութիւնը կ'ընտրուի մասնաճիւղի բնդհանուր ժողովին կողմէ, մէկ տարուան համար, զազանի քուէարկութեամբ և՛ ձայներու պարզ մեծամասնութեամբ: Վարչութեան անդամները վերընտրելի են, ոչ առաւել քան երկու յաջորդական յաւելեալ անդամներ:

Յօդուած 26.— Վարչութեան անդամ կրնան ընտրուիլ անոնք, որոնք նուազագոյնը մէկ տարիէ ի վեր անդամ են միութեան: Բացառութիւն է նոր մասնաճիւղի պարագան:

Յօդուած 27.— Նորընտիր վարչութիւն մը, զիտանի ընտրութեանէն ետք, գրաւոր կերպով կը վաւերացուի շրջանային վարչութեան կողմէ:

Յօդուած 28.— Վարչութիւնը կը բաղկանայ 5, 7 կամ 9 անդամներէ, ճշդուած՝ բնդհանուր ժողովին կողմէ: Անդամներէն ոեւէ մէկուն կամ երկուքին զազանացման, հրաժարու մին կամ երկարատեւ բացակայութեան պարագային, վարչութիւնը իր կայմը կ'ամբողջացնէ ըստ իր հայեցողութեան և՛ շրջանային վարչութեան հաստատութեան: Կէտէն աւելի հրաժարու մի և՛ բացակայութեան պարագային՝ վարչութիւնը կը հրաւիրէ բացառիկ բնդհանուր ժողով:

Յօդուած 29.— Վարչութեան զիտանը կը վարէ ժողովները, կ'արձանագրէ առնուած որոշումները, կը կատարէ թղթակցութիւններ և՛ կը հսկէ ժողովներու որոշումներու գործադրութեան:

Յօդուած 30.— Վարչութիւնը կը նշանակէ զանազան յանձնախումբեր, ըստ կարիքի (ախումբ, գրական, գեղարվեստական, գրատարած և այլն), իր աշխատանքները համակարգելու և՛ անդամները գործի լծելու նպատակով:

Յօդուած 31.— Վարչութիւնը կ'ունենայ իր ներկայացուցչը իրաքանչիւր յանձնախումբի մէջ:

Յօդուած 32.— Վարչութիւնները շրջանային վարչութեան կանոնաւոր կերպով կը փոխանցեն իրենց նիստերուն և՛ բնդհանուր ժողովներուն ատենագրութիւնները:

տարեկան գործունեության թվերի, ինչպես նաև տարեկան ծրագրերի պատճենները՝ առ ի տեղեկություն:

Յօդուած 33.— Վարչութիւններու միջև կապերը կը պահուին շրջանային վարչութեան հասանութեամբ, իսկ շրջանէն դուրս կապերը կը պահուին շրջանային վարչութեան միջոցով եւ Կեդրոնական Վարչութեան հասանութեամբ:

Յօդուած 34.— Վարչութիւնը պարտաւոր է շրջանային վարչութեան ուղարկել իր տարեկան ցենզը, ճշգրտած՝ շրջանային ժողովին կողմէ:

Յօդուած 35.— Ընթացիկ ծախսերու համար գանձապահին մօտ մնացող գումարը կը ճշգրտի մասնաճիւղի վարչութեան կողմէ:

Յօդուած 36.— Վարչութիւնները պատասխանատու են մասնաճիւղի բնօրէնէն ստացուող գումարներու, շրջանային ժողովներու եւ շրջանային վարչութեան որոշումներուն չլրի գործադրութեան:

Յօդուած 37.— Վարչութիւնները շրջանային վարչութեան տնօրինումներուն դէմ պատճառաբանեալ առարկութիւններ բնեղու իրաւունք ունին: Շրջանային վարչութեան երկրորդ պահանջի պարագային՝ որոշումին գործադրութիւնը կը դադարեցնուի:

Յօդուած 38.— Վարչութիւն մը, այլ մասնաճիւղի մը սահմաններէն ներս գործունեութիւն ունենալու համար, նախապէս պէտք է ստանայ շրջանային վարչութեան արտօնութիւնը եւ սուկայ վարչութեան հասանութիւնը:

Յօդուած 39.— Վարչութիւն մը կը իրաւունք ունենայ հայ եւ օտար մշակութային միութիւններու հետ, ստանալու եւ շրջանային վարչութեան հասանութիւնը:

Յօդուած 40.— Շրջանային վարչութիւնը իրաւատու է լուծելու այն վարչութիւնները, որոնք առանց բանաւոր պատճառի, կը թերանան կանոնադրով նախատեսուած իրենց պարտաւորութիւններուն մէջ:

Յօդուած 41.— Վարչութեան մը լուծման պարագային, շրջանային վարչութիւնը կը նշանակէ առժամեայ վարչութիւն մը, պատկան մասնաճիւղի անդամներէն, որ իր աշխատանքը կը տանի մինչև մասնաճիւղի բնօրէնէն ստացուող գումարի առաւելագոյնը 6 ամիսէն:

Յօդուած 42.— Վարչական մը երեք յաջորդական ժողովներէ բացակայելու պարագային՝ վարչութիւնը կը պահանջէ լսել անոր պատճառները: Ենթակային պատճառաբանութիւնը գոհացուցիչ չլսուելու պարագային վարչութիւնը կը պահանջէ անոր հրաժարականը, մնացեալ անդամներուն երկու երրորդի բուկներով:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Յօդուած 43.— Շրջանային ժողովը շրջանի մը գերագոյն ժողովն է: Ան կը գումարուի երկու տարին անգամ մը, շրջանային վարչութեան հրաւերով:

Յօդուած 44.— Արտահերթ շրջանային ժողով կը գումարուի՝ ա.— Վարչութիւններու կէսէն աւելին առանձնաբար ներկայացուցած պահանջով.  
բ.— Շրջանային վարչութեան որոշումով՝ բացառիկ հարցի մը քննարկման եւ տնօրինման համար.  
գ.— Ընտրողային թի Կեդրոնական Վարչութեան պահանջով:

Յօդուած 45.— Ծրջանային ժողովին իրաւաստւ ձայնով կը մասնակցին՝

ա.— Մասնաճիւղերու ներկայացուցիչները:

բ.— Մասնաճիւղերու վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ:

գ.— Ծրջանային վարչութեան ներկայացուցիչը:

դ.— Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչը:

ե.— Շ.Յ. Ի. շրջանի մարմնի ներկայացուցիչը:

Յօդուած 46.— Ծրջանային ժողովին ներկայացուցիչ կրնան ընտրուիլ անոնք, որոնք նուազագոյնը երկու տարիէ ի վեր կ'անդամակցին միութեան, ի բացառեալ նորակազմ մասնաճիւղերու պարագան:

Յօդուած 47.— Մասնաճիւղի բնօրէն ժողովը իր անդամներուն իւրաքանչիւր 25ին համար կ'ընտրէ մէկ ներկայացուցիչ: Վերջին 15 եւ աւելի անդամներուն համար ժողովը կ'ընտրէ յաւելեալ մէկ ներկայացուցիչ:

Յօդուած 48.— Ծրջանային ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

ա.— Ծրջանային վարչութեան անդամները:

բ.— Ծրջանային յանձնախումբերու, միաւորներու եւ հիմնարկներու ներկայացուցիչները:

գ.— Կեդրոնական վարչութեան անդամները:

Յօդուած 49.— Ծրջանային ժողովին խորհրդակցական ձայնով կը հրաւիրուին ներկայացուցիչներու թիւին մէկ երրորդին համեմատութեամբ «Համագոյային» անդամներ, որոնք նուազագոյնը մէկ տարիէ ի վեր կ'անդամակցին միութեան: Ծրջանային վարչութիւնը իրաւաստութիւն ունի հրաւիրելուներուն կէտը նշանակելու, իսկ մնացեալը կ'ընտրէ շրջանային ժողովը:

Յօդուած 50.— Ծրջանային ժողովը օրինաւոր կը նկատուի.— ա.— երբ ներկայացուցիչներու թիւին կէսէն աւելին ներկայ է:

բ.— երբ մասնաճիւղերու թիւին կէսէն աւելին ներկայ է:

Յօդուած 51.— Ծրջանային ժողովը կը տանի հետեւեալ աշխատանքները.—

ա.— կ'ընտրէ իր գիւտեր եւ բանաձեւի, հաշուեքննիչ, արխիւային, բուժօրհոյզ յանձնախումբերը, որոնց իրաւաստութիւնները կ'աւարտին ժողովի փակուածին:

բ.— կը քննէ շրջանաւարտ վարչութեան ներկայացուցիչը.— ծուռնէութեան տեղեկագիրը եւ կը հանձնէ համապատասխան բանաձեւ:

գ.— Գոյիք երկամեայ շրջանին համար կը ճշդէ նորընտիր շրջանային վարչութեան գործունէութեան ուղեգիծը, կը կազմէ շրջանային վարչութեան նախահաշիւը եւ կը կատարէ մասնաճիւղերու վրայ ցենզի բաշխումը:

դ.— կը քննէ շրջանային ժողովի օրակարգը եւ կը հանձնէ համապատասխան բանաձեւեր:

ե.— երկու տարուան համար կ'ընտրէ նոր շրջանային վարչութիւն:

զ.— կ'ընտրէ պատգամաւորներ «Համագոյային» Պատգամաւորական ժողովին, ըստ կանոնագրի արամազրութեան:

Յօդուած 52.— Ծրջանային ժողովը կը քննէ մասնակցութեան ձեւը (իրաւաստ կամ խորհրդակցական ձայնով) այն մասնաճիւղերուն, որոնք իրենց նիւթական պարտուորութիւնները չեն կատարած:

Յօդուած 53.— Ծրջանային ժողովի որոշումները եւ շրջանային վարչութեան ընտրութեան արդիւնքը կը յղուին Կեդրոնական վարչութեան, առ ի վաւերացում:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդուած 54.— Ծրջանային վարչութիւնը կը վարէ շրջանի միութեանկան գործերը, կանոնագրի արամազրութեան:



թեան, շրջանային և պատգամաօրական ժողովներու որոշումներու սահմանին մէջ:

Յօդուած 55.— Կեդրոնական Վարչութեան կարգադրութեամբ, շրջանային վարչութիւն կարելի է ունենալ, երբ աշխարհադասական տուեալ շրջանի մը մէջ մէկէ աւելի մասնաճիւղ կայ, որոնց անդամներուն ընդհանուր թիւը կ'անցնի 150ը:

Յօդուած 56.— Շրջանային վարչութիւնը կը բաղկանայ 5, 7, 9 կամ 11 անդամներէ, ընտրուած՝ երկու տարուան համար, շրջանային ժողովին կողմէ, գազանի քուէարկութեամբ և ձայներու պարզ մեծամասնութեամբ: Շրջանային վարչութեան անդամները ընտրելի են ոչ աւելի քան 2 յաջորդական անգամներ:

Յօդուած 57.— Շրջանային վարչութեան անդամ կրնան ընտրուիլ անոնք, որոնք նուազագոյնը 2 տարուան համադրայնական են և 1 տարի մաս կազմած են շրջանի մասնաճիւղերէն մէկուն վարչութեան:

Յօդուած 58.— Մասնաճիւղերը, շրջանային յանձնախումբերը և գեղարուեստական միասորները ուղղակիօրէն ենթակայ են շրջանային վարչութեան, որուն պարտականութիւնն է համադրել և ներդաշնակել անոնց գործունէութիւնը:

Յօդուած 59.— Շրջանային վարչութիւնը ծօտէն կը հետևի շրջանային և մնայուն բնոյթ ունեցող կրթական և այլ հաստատութիւններու և անոնց ղեկավարութեան մը կը փաստօրէն պատասխանատու մարմիններու, որոնք կ'առաջնորդուին հաստատութեան ներքին կանոնադրով:

Յօդուած 60.— Շրջանային վարչութիւնը կ'ունենայ երեք հոգինոց զիւան մը, բաղկացած՝ ատենապետէ, ատենադպրէ և գանձապահէ:

Յօդուած 61.— Շրջանային վարչութեան ներկայացուցիչը կրնայ մասնակցիլ մասնաճիւղերու, միասորներու վարչութիւններուն և շրջանային յանձնախումբերու ժողովներու՝ խորհրդակցական ձայնով:

Յօդուած 62.— Շրջանային վարչութեան անդամը չի կրնար ներկայացուցիչ ընտրուիլ մասնաճիւղի մը կողմէ:

Յօդուած 63.— Շրջանային վարչութիւնը, շրջանային ժողովէն առնու ազն կրկու ամիս առաջ, մասնաճիւղերու և կը յղէ շրջանային ժողովի օրակարգը:

Ծանօթ.— Մասնաճիւղեր, կիւ սրահաբի հարցեր ունին, պէտք է, շրջանային ժողովէն երեք ամիս առաջ, գանձեք յղեն շրջանային վարչութեան:

Յօդուած 64.— Շրջանային վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան կը փոխանցէ շրջանային ժողովի ատենադրութեան պատճէնը, ինչպէս նաև իր նիստերու ատենագրութեանց, տարեկան ծրագիրի գործունէութեան տեղեկագիրի և հաշուեկշիռի պատճէնները:

Յօդուած 65.— Որեւէ պատճառով շրջանային վարչութեանը գաղտնի անդամ մը փոխարինելու համար շրջանային վարչութիւնը իր կողմը կ'ամբողջացնէ ըստ իր հայեցողութեան և Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

Յօդուած 66.— Շրջանային վարչութիւնը պարտաւոր է Կեդրոնական Վարչութեան փոխանցել Պատգամաօրական ժողովի կողմէ որոշուած ցենզը, ամէն տարի կանոնաւորաբար:

Յօդուած 67.— Շրջանային վարչութիւնը իրաւատու է յատուկ լիազօր ներկայացուցիչներ ու զարկելու իր մասնաճիւղերու և միասորներու վարչութեանց բարոյական և նիւթական գործունէութիւնը քննելու, ներքին խնդիր-

ներ կարգադրելու եւ անոնց ուղղութիւն տալու համար:

Յօդուած 68.— Երջանային վարչութիւնը բացառիկ պարագաներու իրաւասու է լուծելու մասնաճիւղի վարչութիւն մը եւ առաջացնելու նշանակովի վարչութիւն, որ կը գործէ առաւելագոյնը 6 ամիս:

Յօդուած 69.— Միայն շրջանային վարչութիւնը կրնայ միջմասնաճիւղային հանդիպումներ եւ համապումարներ կազմակերպել:

Յօդուած 70.— Միջ-շրջանային կազմերը կը պահուին կեդրոնական Վարչութեան գիտութեամբ:

Յօդուած 71.— Երջանային վարչութիւնը կը նշանակէ յանձնախումբեր, յատուկ աշխատանքներ վարելու համար:

Յօդուած 72.— Երջանային վարչութեան կողմէ կեանքի կոչուած յանձնախումբերը, իրենց աշխատանքի ծրագիրը մշակելէ ետք, պարտին զայն ներկայացնել շրջանային վարչութեան՝ առ ի վաւերացում:

Յօդուած 73.— Երջանի մը յուժման պարագային, շրջանի գոյքերն ու անշարժ կայուածները կը յանձնուին կեդրոնական Վարչութեան:

## ՄԻԱԻՈՐՆԵՐ

Յօդուած 74.— Միաւորները զուտ մասնագիտական գործունէութիւն ունեցող խմբակցութիւններ են, որոնք գործելու իրաւունք ունին իրենց վերաբերող մարզէն ներս:

Յօդուած 75.— Ամէն մէկ շրջանի մէջ գեղարուեստական իրաքանչիւր մարզ (Թատրոն, պարարուեստ, երաժշտու-

թիւն, կերպարուեստ եւ լին.) միայն մէկ միաւոր կրնայ ունենայ:

Յօդուած 76.— Միաւորները կրնան կազմուիլ շրջանային վարչութեան կողմէ միայն:

Յօդուած 77.— Միաւորները կ'ունենան իրենց ներքին կանոնադիրը, վաւերացում՝ շրջանային վարչութեան կողմէ:

Յօդուած 78.— Միաւորները կրնան բաղկանալ «Համազգային»ի անդամներէ եւ ոչ անդամներէ:

## ՄԵԿՈՒՍԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Յօդուած 79.— Մեկուսի մասնաճիւղը կը գործէ շրջանի մը մէջ, ուր շրջանային վարչութիւնն զոյութիւն չուի եւ կ'ունենայ իր ներքին կանոնադիրը, որ կը վաւերացուի կեդրոնական Վարչութեան կողմէ: Մեկուսի շրջանը «Համազգային»ի Պատգամաւորական Ժողովին կը մասնակցի մէկ իրաւասու ձայնով: Երջանը կ'ունենայ իր վարչութիւնը, որ կը կոչուի մեկուսի վարչութիւն եւ ուղղակի կը կապուի կեդրոնական Վարչութեան: Մեկուսի վարչութիւնը կը գործէ շրջանային վարչութեան վերաբերող յօդուածներուն արամազբութեամբ:

## ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդուած 80.— Պատգամաւորական Ժողովը «Համազգային»ի գերագոյն ժողովն է: Անոր որոշումները պարտադիր են «Համազգային»ի բոլոր ժողովներուն, մարմիններուն եւ անդամներուն: Կը զուտարուի չորս տարին անգամ մը:

Յօդուած 81.— Պատգամաւ որական ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին.—  
ա.— Շրջաններու պատգամաւ որները.  
բ.— Մեկուսի մասնաճիւղերը մէկական ներկայացուցիչով.  
գ.— Շրջանային վարչութիւններու ընտրեալ ներկայացուցիչները.  
դ.— Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը.  
ե.— Հ.Յ.Գ. Բիւրոյի ներկայացուցիչը:

Յօդուած 82.— Պատգամաւ որական ժողովին ի պաշտօնէ եւ խորհրդակցական ձայնով կը մասնակցին Կեդրոնական Վարչութեան մնացեալ անդամները եւ անոր կապուած հաստատութիւններու անդամները:

Յօդուած 83.— Պատգամաւ որական ժողովին խորհրդակցական ձայնով կը մասնակցին նաեւ իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ երրորդին համեմատութեամբ անդամներ, որոնք կը հրաւիրուին Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ հիմնուելով շրջաններ եւ մեկուսի մասնաճիւղերէ եկած առաջարկներու վրայ: Կեդրոնական Վարչութիւնը կրնայ խորհրդակցական ձայներու կէտր իր կողմէ նշանակել:

Յօդուած 84.— Պատգամաւ որական ժողովին մասնակցող պատգամաւորներուն թիւը կը հշոյտի հետեւեայ ձեւով.—  
ա.— Մինչեւ 150 անդամի համար 1 պատգամաւ որ.  
բ.— 150էն 300 անդամի համար 2 պատգամաւ որ.  
գ.— 300էն 450 անդամի համար 3 պատգամաւ որ.  
դ.— 450էն 600 անդամի համար 4 պատգամաւ որ.  
ե.— 600էն աս ելի անդամի համար 5 պատգամաւ որ:

Յօդուած 85.— Մեկուսի մասնաճիւղի պատգամաւորը կ'ընտրուի մասնաճիւղի ընդհանուր ժողովին կողմէ:

Յօդուած 86.— Պատգամաւ որական ժողովը կը քննէ շրջաններու եւ մեկուսի մասնաճիւղերու պատգամաւորներու ժողովին մասնակցութեան ձեւը, որ պայմանաւորուած է անոնց նիւթական պարտաւորութեանց լրիւ կատարումով:

Յօդուած 87.— Պատգամաւ որական ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է շրջաններու, ինչպէս նաեւ իրաւասու ձայնի իրաւունք ունեցող պատգամաւորներու պարզ մեծամասնութիւնը:

Յօդուած 88.— Պատգամաւ որական ժողովին պատգամաւոր կրնայ ընտրուիլ եւ կամ խորհրդակցական ձայնով հրաւիրուիլ անուսպն երեք տարի «Համագային»ի մաս կազմած անդամ մը:

Յօդուած 89.— Պատգամաւ որական ժողովը՝  
ա.— Կ'ընտրէ իր զիւսերը, բանաձեւի, հաշուեքննիչ, արխիւային եւ քուէարկող յանձնախումբերը, որոնց իրաւասութիւնները կ'աւարտին ժողովի փակումին.  
բ.— Կը քննէ, շրջանային ժողովներու կողմէ փոխանցուած՝ շրջաններու եւ մեկուսի մասնաճիւղերու քառասունչորսու նկատեալ ամփոփ տեղեկագիրները եւ կը հանձնէ համապատասխան բանաձեւ.  
գ.— Կը քննէ եւ կը գնահատէ Կեդրոնական Վարչութեան եւ անոր ենթակայ հաստատութիւններու բարոյական եւ նիւթական տեղեկագիրները.  
դ.— Կը հշոյլ միտեալ յատուցուող շրջանի զործունելութեան ու ղեկիծը.  
ե.— Կը կազմէ Կեդրոնական Վարչութեան նախահշիւր եւ կը կատարէ շրջաններու վրայ ցենզի բաշխումը.  
զ.— Ի սրբկին կը վերամշակէ «Համագային»ի Կանոնադրը.  
է.— Կը քննէ եւ կը լուծէ շրջանի մը մէջ առկա մնացած հարցերը.  
ը.— Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւնը:

Յօդուած 90.— Պատգամաորական ժողովը «Համազգային»ի Ընդհանուր Կանոնադիրքին մէջ հիմնական փոփոխութիւններ կը մտցնէ, պայմանաւ որ փոփոխութեանց առաջարկները առնուազն վեց ամիս առաջ յանձնուած ըլլան բոլոր շրջաններու եւ մեկուսի մասնաճիւղերու ժողովներու քննութեան՝ Կեդրոնական Վարչութեան խորոզակով:

Յօդուած 91.— Բացառիկ Պատգամաորական ժողով կրնայ գումարուիլ՝  
ա.— Կեդրոնական Վարչութեան հրաւրով:  
բ.— Շրջաններու եւ մեկուսի մասնաճիւղերու երկու երբորդի մեծամասնութեան առաջարկով:  
գ.— Լ.Յ.Դ. Բիւրոյի հրաւրով:

### ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Յօդուած 92.— «Համազգային»ի գործադիր գերագոյն մարմինն է Կեդրոնական Վարչութիւնը:

Յօդուած 93.— Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Պատգամաորական ժողովին կողմէ, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ: Եթէ երեք յաջորդական քուէարկութիւններէ ետք պէտք կ'զայ մեծամասնութիւնը չգոյանայ, չորրորդ քուէարկութիւնը կը կատարուի ձայներու պարզ մեծամասնութեան հիման վրայ:

Յօդուած 94.— Կեդրոնական Վարչութիւնը կը բաղկանայ 7, 9 կամ 11 անդամներէ, ընտրուած չորս տարուան համար: Կեդրոնական Վարչութեան անդամները ընտրելի են ոչ աւելի քան երկու յաջորդական անդամներ:

Յօդուած 95.— Կեդրոնական Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ չորս տարուան համազգայնական մը, որ նա—

խապէս մեկուսի վարչութեան մը, շրջանային վարչութեան մը կամ Կեդրոնական Վարչութեան յանձնախումբերէն մեկուսի մաս կազմած է:

Յօդուած 96.— «Համազգային»ի Կեդրոնական Վարչութեան կը պատկանի «Համազգային»ի Կանոնադիրքին եւ Պատգամաորական ժողովի որոշումներուն մեկնաբանութեան իրաւունքը եւ գործադրութեան հսկողութիւնը:

Յօդուած 97.— Կեդրոնական Վարչութեան գիւտներ կը բաղկանայ ատենապետ մը, ատենադպրէ մը եւ դանձապահ մը:

Յօդուած 98.— Միայն Կեդրոնական Վարչութիւնը կրնայ համահայկական ձեռնարկներ կազմակերպել շրջաններու գործակցութեամբ:

Յօդուած 99.— Կեդրոնական Վարչութիւնը կը գործէ մասնադիտացած յանձնախումբերու գրութեամբ, որոնց շրջանը կ'աւարտի Կեդրոնական Վարչութեան շրջանի աւարտին:

Յօդուած 100.— Կեդրոնական Վարչութեան ենթակայ յանձնախումբերէն են—

ա.— Կրթական յանձնախումբը.— Կը գրադի «Համազգային»ի Կեդրոնական Վարչութեան ենթակայ կրթական բոլոր հաստատութիւններու ուսումնական, տնտեսական եւ կազմակերպական հարցերով՝ անօրէններուն հետ գործակցաբար:

բ.— Հրատարակչական յանձնախումբը.— Կը պատրաստէ հրատարակելի գործերու պարբերական ծրագրերները, պատրաստել կուտայ նոր գառապիքներ, կը հսկէ զիքներու տպագրութեան, սպառման եւ տպարանի ու գրախանութի գործառնութեան:

գ.— Տնտեսական յանձնախումբը.— Կը գրադի «Համազգ—

գային»ի շարժուն ստացումը քննելու շահարկմամբ, «Համազգային»ի մշակութային հիմնադրամի յանձնարարություն է կր հսկել հաշուապահական աշխատանքներուն:

դ.— Կալուածոց յանձնարարութիւնը.— Կր զրազի «Համազգային»ի Կեդրոնական Վարչութեան պատկանող ըստացումը քննելու յանձնարարութիւնը առուծարխ, խնամք, հաշու եկիւն, եւ այլն:

Յօդուած 101.— Կրթական, հրատարակչական եւ այլ հաստատութիւնները կր զործեն յատուկ կանոնադրութիւններով, որոնք կր հաստատուին «Համազգային»ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Յօդուած 102.— «Համազգային»ի կրթական եւ հրատարակչական հաստատութիւնները կրնան ունենալ իրենց խնամակալ մարմինները, նշանակուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ, կամ ընտրուած՝ ըստ իրենց ներքին կանոնադրութեան:

Յօդուած 103.— Կեդրոնական Վարչութեան ենթակայ հաստատութիւններու տնօրէնները կր նշանակուին Կեդրոնական Վարչութեան կողմէ, Հ.Յ.Դ. Բիւրոյի հասանութիւնը ստանալէ ետք:

Յօդուած 104.— Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը կրնայ մասնակցել շրջանային վարչութիւններու ժողովներուն՝ խորհրդակցական ձայնով:

Յօդուած 105.— Որեւէ պատճառով Կեդրոնական Վարչութեանէն դադարող անդամ մը փոխարինելու համար, Կեդրոնական Վարչութիւնը իր կազմը կ'ամբողջացնէ ըստ իր հայեցողութեան եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի հասանութեամբ:

Յօդուած 106.— Կեդրոնական Վարչութիւնը իրաւասու է, իր որոշումով կամ շրջանէ մը եկած որոշումի հիմամբ, յա-

տուկ իրագոր ներկայացուցիչներ ունենալու՝ Վարչութեանց բարոյական եւ նիւթական գործունէութիւնը քննելու, ներքին խնդիրները կարգադրելու եւ անոնց ուղղութիւն տալու համար:

Յօդուած 107.— Կեդրոնական Վարչութիւնը բացառիկ պարագաներու իրաւասու է յուժելու շրջանային կամ մեկուսի վարչութիւն մը եւ առաջացնելու նշանակովի վարչութիւն, որ կր զործէ առուելագոյնը մէկ տարի:

Յօդուած 108.— Կեդրոնական Վարչութիւնը կր վարէ միութեան ընդհանուր գործունէութիւնը կանոնադրի արամադրութեանց եւ Պատգամաւորական ժողովի որոշումներու սահմանին մէջ:

Յօդուած 109.— Շրջանային վարչութիւնները ուղղակիօրէն ենթակայ են Կեդրոնական Վարչութեան, որուն պարտականութիւնն է համադրել եւ ներդաշնակել անոնց գործունէութիւնը:

#### ԿԱՐԿԱՊԱՀԱԿԱՆ

Յօդուած 110.— Միութեանէն անդամ մը կրնայ հրաժարել, երբ կր ներկայացնէ գրաւ որ հրաժարական:

Յօդուած 111.— Անդամ մը մասնաճիւղի վարչութեան կողմէ միութեանէն դադարած կը նկատուի երբ— ա.— Ձի կատարեր իր նիւթական պարտաստութիւնները:

բ.— Ձի յարգեր Կանոնադրի արամադրութիւնները:  
գ.— Կուեննայ բարոյական կամ նիւթական սայթաքում:

Յօդուած 112.— Կարգապահական միջոցառումներն են՝  
ա— Դիտողութիւն.  
բ— Դազրեցում:

Յօդուած 113.— Անդամի մը նկատմամբ կարգապահական միջոցառումներու մանրամասնութիւնները կը ճշդութիւն շքաններու ներքին կանոնադրներու միջոցով:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդուած 114.— Շրջանները կ'ունենան իրենց ներքին կանոնադրները, որոնք կը մշակուին շքանային ժողովին կողմէ և կը վստեքացուին Կեդրոնական Վարչութեան կողմէ: Ներքին կանոնադրին մէջ շքանի կարգակերպական կառուցը կրնայ յարմարեցուիլ տեղական պայմաններուն, մնայով ներկայ կանոնադրով ճշդութեամբ սկզբունքներու սահմանին մէջ: Մասնաճիւղերը չեն կրնար առանձին կանոնադր ունենայ:

Յօդուած 115.— Շրջանային և Պատգամադրական ժողովներու պատգամադրները իրենց հետ պէտք է ունենան դիրքնք բնորոշ ժողովին կողմէ արուած լիազօրացիք:

Յօդուած 116.— Վարչութիւններու գումարները գրամատան մէջ պահ կը զրուին «Համազգային» անդամներուն անունով: Գանձում կարելի է կատարել վարչութեան որոշումով և դիւանէն իրաւաստ կրեք անձերէ կրկուքին ստորագրութեամբ:

Յօդուած 117.— Վարչութիւն մը ինքնարեւարար լուծուած կը համարուի, երբ կը կորսնցնէ իր անդամներուն մեծամասնութիւնը. նման պարագայի անմիջապէս կը հրաւիրուի Համապատասխան ժողովը նոր վարչութիւն ընտրելու համար:

Յօդուած 118.— Քուտարակութեան մէջ ճերմակ քուտները (ձեռնպահները) ընդհանուր հաշիւին մէջ չեն առնուիր: Բայց եթէ պատահի որ ձեռնպահներուն թիւը քուտարակներու թիւն աւելի է, խնդրոյ առարկայ որոշումը ինքնարեւարար վերաքննելի կը նկատուի: Երեւոյթը կրկնուելու պարագային հարցը զուրա կը բերուի օրակարգէն և կը փոխանցուի գերագուս ժողովին կամ վարչութեան:

Յօդուած 119.— Վարչութիւններու լուծման և անդամներու դադրեցման որոշումները կը արուին անդամներու երկու երրորդի մեծամասնութեան ձայնով: Երկու պարագաներուն ալ թէ վարչութիւններուն և թէ անդամներուն կը արուի նախապէս պաշտպանուելու իրաւունք: Կարգապահական այս մտքինումներուն ղէմ կարելի է բողոքել գերագուս մարմինին կամ ժողովին՝ որոշումի հաղորդում օրէն մինչև երկու ամիս:

Յօդուած 120.— Ամէն վարչութիւն պարտաւոր է ստացած գումարին համար տայ համապատասխան կներութեամբ ընկալալիք, զանձապահ ստորագրութեամբ:

Յօդուած 121.— Վարչութիւններու բոլոր վճարումները կը կատարուին միայն վարչութեան ժողովի որոշումով և համապատասխան արձանագրութեան խաբ:

Յօդուած 122.— Վարչութիւնները պարտին իրենց հաշիւները գերագուս մարմինին ներկայացնել իրենց ժամանակաշրջանի աւարտին:

Յօդուած 123.— Վարչութիւնները չեն կրնար իրենց գանձէն սրել փոխառուութիւն ընել սեւէ անհատի կամ անգամի:

Յօդուած 124.— Վարչութեան մը անդամները հասարարար պատասխանատու են իրենց գերագուս ժողովին:

## ԿԱՆՈՆԱԳԻՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

- Յօդուած 125.— Միայն «Համազգային»ի Պատգամաւորական ժողովը իրաւասու է փոփոխութեան ենթարկելու ներկայ կանոնադրութիւնը:
- Յօդուած 126.— Սոյն կանոնադրին մէջ փոփոխութիւններ կը կատարուին ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:
- Յօդուած 127.— Մասնաճիւղերու և շրջաններու ընդհանուր ժողովներու կողմէ ընտրուած կանոնադրային փոփոխութեան առաջարկը կը ներկայացուի Կեդրոնական Վարչութեան Պատգամաւորական ժողովէն 9 ամիս առաջ: